

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

(Օտարադպրացիք զիմում են ուղղակի
Тифлисе. Редакция „Миръ“)

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Այդպէս ոչինչ չէք փոխի:—Նեք ընդ տե-
սու թիւն: Ստեփաննոս՝ Նազարեանց: Նա-
մակ Նազարեանց: Ներքին լուրեր:—Արտա-
քին տեսու թիւն: Պրանսիա: Անգլիա:
Յունաստան: Նամակ Թիֆլիսից: Արտաքին
լուրեր:—Սառն լուրեր:—Մշակիչ հեռա-
գիրներ:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ԱՅԴՊԵՍ ՈՉԻՆՉ ՉԷՔ ՓՈԽԻ

Թիֆլիսի հայերը ամեն տեղ
ուսումնարաններ են հիմնում: Ի
հարկէ չէ կարելի չը համարել
այդ տեսակ գործին: Հայ տղա-
ներ և հայ աղջիկներ սկսում են
ամեն տեղ ուսում առնել... Հատ
բարի գործ է...

Բայց հայերը հիմնում են այդ
ուսումնարանները միայն իրանց
համար, դատարանում են այդ
ուսումնարաններում միայն հայ
ազգի զաւակներին:

Դիցուք թէ ամբողջ ազգը քիչ
շատ լուսաւորվեցաւ, ամեն մի հայ
քիչ շատ ուսում ստացաւ, կրթված,
զոնէ գրագէտ դարձաւ,—բայց
հայերին չը շնորհաւորուէր ազգերը,
քիւրդերը և թիւրքերը դարձեալ
նոյն վիճակի մէջ կը մնան տոգէտ,
մոլեռանդ, բարբարոս, վայրենի,
կոռուպտիւ, հարստահարող, աւա-
զակ...

Դիցուք թէ Թիֆլիսի հայը
լուսաւորված ազգ դարձաւ,—մի-
թէ դորանով կը փոխվեն այն ան-
միտիմար հանգամանքները, որոնց
մէջ գտնվում են Թիֆլիսի հա-
յերը, չը շնորհաւորուէր վայրենի, բար-
բարոս ազգերով:

Թիւրքը և քիւրդը հարստա-
հարում են, ճնշում են, բռնաբա-
րում են հայերին,—միթէ վայ-
րենի մարդու համար մի և նոյն
չէ տոգէտ է հայը, թէ լուսաւոր-
ված է, միթէ քիւրդերը և թիւր-
քերը նոյնքան չեն հարստահարի,
նոյնքան չեն ճնշի հային, եթէ
նա լուսաւորված դառնայ, նոյն-
քան չեն անպատուի հայ կնոջ և
հայ կոյսին, եթէ իմանան որ հայ
երիտասարդը, կինը կամ կոյսը ու-
սումնարանում են սովորել... Նը-
րանց ինչ փոյթ... Միթէ քիւր-
դի համար աւելի գոնաւոր է բռն-
նաբարել ուսումնարանից դուրս

եկած հայ օրիորդին, քան թէ ան-
գրագէտ հայ կնոջ...

Կարծում էք, գոցէ, որ թիւր-
քը և քիւրդը առանձին յարգանք
կը զգան դէպի հայը կամ հայու-
հին, երբ կիմանան թէ նրանք
«Երարատեան» ընկերութեան ու-
սումնարանում են աւարտել ի-
րանց ուսումը... Կարծում էք որ
հայը կը կարողանայ ասել թիւր-
քին կամ քիւրդին «այժմ չը պէտք
է դիպչես ինձ, իմ կնոջը և իմ
աղջկան, որովհետեւ մենք ուսումն
առած ենք...»: Վայրենի մարդու
համար մի և նոյն է հարստահա-
րել ուսումն առած, կամ տոգէտ
մարդուն, առեւանգել լուսաւորված
կամ անգրագէտ կնոջ:

Երեւակայեցէք մի մարդուն, որ
ապրում է շնորհաւորված գարշա-
հոտ ճահիճներով և կարծում է
որ կազատվի այդ գարշահոտու-
թենից, երբ իր բնակարանի օդի
մէջ անուշահոտութիւններ կը տա-
րածի. փոխանակ ջանալ նոյն իսկ
փտող ճահիճները մաքրելու, նը-
րանց սննդացնելու, որովհետեւ նը-
րանք են գարշահոտութեան աղ-
բիւրը...

Նոյնը անում է և հայը թիւր-
քիայում: Նա ինքն իր զաւակնե-
րի համար ուսումնարաններ է հիմ-
նում, ինքն ուսում է առնում և չէ
մտածում որ իրան շնորհաւորող և
իրան վնաս տուող ազգերը դար-
ձեալ նոյն վայրենի, բարբարոս դը-
րութեան մէջ են մնում, ուրեմն
վերջը դարձեալ պէտք է նրան
հարստահարեն, ոչնչացնեն իրանց
բանի կոպիտ ոյժով...

Բաւական չէ իրան լուսաւորել,
պէտք է աշխատել լուսաւորել և
այն բարբարոսներին, որոնք ամեն
րօպէ պատրաստ են քեզ կտոր
կտոր անել, եթէ ոչ ի զուր է քո
բոլոր ուսումը, ի զուր են քո բո-
լոր ջանքերը,—գու երբէք հանգս-
տութիւն և ապահովութիւն չես
ունենայ և վայրենի մարդուն դո-
րանով չես յաղթի, որ ինքդ քեզ
միայն լուսաւորել ես...

Վերջապէս երբ կը հասկանայ
Թիֆլիսի հայը, որ բաւական չէ
միայն իր զաւակներին կրթելու,
պէտք է աշխատել իր ուսումնա-

րանների մէջ ընդունելու, պէտք է
կրթել և այն ազգերի զաւակնե-
րին, որոնք հայերի ամենակատա-
ղի թշնամիներն են: Իր անձնա-
կան օգուտ աչքի առջև ունելով,
հայը պէտք է աշխատի կրթել
քիւրդի և թիւրքի զաւակներին,
որպէս զի հայի ապագայ սերուն-
դը շնորհաւորված էլ չը լինի գա-
զան վայրենիներով:

Ի զուր է եթէ հայը հիմնում
է իր ուսումնարանները միայն իր
համար, առանց աշխատելու ըն-
դունել իր դպրոցները թիւրք և
քիւրդ զաւակներին. նա դարձեալ
բարբարոսներով շնորհաւորված կը
մնայ... վայրենի մարդու սրի մի
հարուած կարող է լուսաւորված
ազգի մտաւոր կեանքի դարեւոր
արդիւնքները մի րօպէում ոչնչաց-
նել: Սուրբ ամենաբարձր գաղա-
փարներ կարող է ոչնչացնել... դո-
րանից ի՞նչ հեշտ բան կայ սպա-
նել մարդիկներին...

Հարկաւոր է, ուրեմն ապահով
ապրելու համար նախ և առաջ
աշխատել սուր կրողի ձեռքից
խլել իր սուրը, լուսաւորել նրան:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ներկայ համարում տպւում ենք մեր
սեփական թղթակցից ստացած մի
հեռագիր. Ստեփաննոս, որ հաղորդում
է թէ մեր յայտնի գրող և հայագէտ,
Ստեփաննոս Նազարեանց, վախճան-
վեցաւ այս ամսից 26-ին:

Նա ծնվել է Թիֆլիսում, 1812
թ-ին, ուրեմն 67 տարեկան էր:

Նազարեանցի բնածնիքը ծագու-
մով Պարսկաստանից էր, որտեղից
նրանք եկան ներկայ դարի սկզբում:
Նազարեանցի հայրը քահանայ էր: Տէր
Նազարեանց և տիկին Մանուշակ
նրա ամուսինը, ունէին չորս զաւակ,
որոնցից ամենից կրտսերը Ստեփան-
նոսն էր:

Փոքրիկ Նազարեանց սկսեց իր ու-
սումը Թիֆլիսի մէջ բնակվող մի դա-
րաբայի Պողոս վարդապետի մօտ,
որին յանձնել էր նրան իր հայրը, և
որի մօտ ամբողջ ուսումը պարու-
նակում էր Չոլեհանի քերականու-
թեան մէջ:

Նազարեանց է պատրաստվել Նազա-

րեանց համալսարանը մտնելու. հա-
մար,—մեզ յայտնի չէ, բայց յայտնի
է որ 1832 թ-ին, նա ուղևորվեց
Թիֆլիսից դէպի Գորգատու: Իր բարձ-
րագոյն կրթութիւնը Գորգատուի հա-
մալսարանում ստանալով, ուրեմն բո-
լորովին գերմանական ոգով կրթվե-
լով, նա մտքեց իր գիտնական և
ազգային գործունէութեան մէջ գեր-
մանացուն յատուկ ծանր, հիմնաւոր,
կրիտիկական ոգին:

Թէ ուր, թէ եւրօպական գիտ-
նականների շրջանին Նազարեանց
յայտնի է որպէս լեզուագէտ: Նա
ունի մի քանի ուսումնական գրուած-
ներ: Նա պրոֆէսոր էր Նազարի հա-
մալսարանում, յետոյ Ստեփանի Լազա-
րեան ճեմարանում:

Բայց հայերին նա յայտնի է, որպէս
«Հիւսիսափայլ» ամսագրի խմբագիր և
հրատարակիչ: Այդ ամսագիրը սկսեց
հրատարակվել 1858 թ-ին Ստեփա-
նոսի մի տողանդաւոր աշխատակցի,
Միքայէլ Նալբանդեանցի գործակցու-
թեամբ, «Հիւսիսափայլ», թէ և ըն-
թերցողների փոքր շրջանից էր կարգա-
գումարելի է ասել, յետագայում
թիւն գործեց ուսումնական գործա-
կանութեան մէջ, թէ նոր, կենդանի
աշխարհաբար լեզու գրական գործա-
ծութեան մէջ մտնելով և թէ կը
բնորոշական հայեացք գցելով մեր
ազգային մի քանի հնացած հիմնա-
կութիւնների ի դադարների վրա:
Գործով բացատրվում է այն կատա-
ղի թշնամութիւնը որ յարուցեց իր
դէմ Նազարեանց իր գործունէու-
թեամբ: Նազարեանցի լեզու միշտ
յետագայում «Մեզու Հայաստանի» լրա-
գիրը նրա ամենամահաւոր, ամենա-
կատաղի թշնամիներն էին:

Արդէն 1864 թ-ին գանազան
հանգամանքների շնորհով «Հիւսիսա-
փայլ» դադարեց, և ել երբէք չը
վերականգնեցաւ:

Եթե անասուն թեմականութեան նա-
զարեանց հրաւիրվեցաւ Թիֆլիս որ-
պէս Ներսիսեան հոգևոր-ազգային
դպրոցի տեսուչ, բայց երկար չը կա-
րողացաւ դիմանալ Թիֆլիսի հայ ին-
տելիգենցիայի խելոյղ շնորհի մէջ...
Ստեփան վերադարձած, նա կրկին
ընդունեց Լազարեան ճեմարանի ա-
րեւելեան լեզուների պրոֆէսորի պաշ-
տօնը, որի մէջ և մնաց մինչև մահը:
Կարող ենք ասել որ Նազարեանց,
ինչքան էլ մեծ գործ կատարեց հայ
գրականութեան համար իր «Հիւսի-
սափայլ» ամսագիրը հրատարակելով,
բայց նա աւելի գիտնական մարդ
էր, քան թէ ժողովուրդական գոր-
ծող, քան թէ պուրկիցիտ: Գործն
ամենալաւ ապացոյց այն կարող է
լինել, որ զգլխով հասարակական
գործունէութեան մէջ պատահող
գոնաւորութիւններից, Նազարեանց
մինչև իր կեանքի վերջը չը կարո-
ղացաւ շարունակել պուրկիցիստական
գործունէութիւնը: Անհրաժեշտ է որ
նա յուսահատվի, բնկձվեց հայա-

ճանքները, ինտրիգները և թշնամութեան հարուածի տակ:

Իսկ մամուլի մէջ գործող յատուկ թիւնն է, ինչքան էլ դժուարութիւններ, արգելքներ լինեն,— երբէք չը թուանայ, մինչև որ փիլիպական ոյժերը չը սպառվեն, երբէք չենթարկուի, չը խնայարկով անաջող հանգամանքների առջև....

Նւ ահա այդ պատճառով յայնսփեցաւ մի զարմանալի, անսովոր երևոյթ: Գործողը, կենդանի մարդը, իր հասարակական ասպարէզը թողած, մոռացվում է ամենքից.... Նա կենդանի է մնում երկար տարիներ, բայց ամենքը նրան մոռացել են....

Նւ միայն երբ նաղարեանցի մահվան լուրը կը տարածվի հայերի մէջ, թէ ուռաատանցի և թէ թիւրքիացի հայերը կը յիշեն նրան, կը հասկանան որ նաղարեանց մեծ կրօնողներէն մէկն էր, որ նա հայոց ժամանակակից դրական ասպարիզում վերանորոգիչ էր և յիշատիւնի:

Այո, մտքով, ուղղութեամբ, գիտական զարգացմամբ, սովորութեամբ նա վերանորոգիչ էր, բայց իր համեստ, մեղմ, փափուկ բնավորութիւնը հակառակում էր իր գործունէութեան....

Պաշտօնի համար, վերանորոգիչ, յիշատիւնի լինելը ցանկացողի համար հարկաւոր է ունենալ աւելի զօրեղ, աւելի համարձակ, աւելի յանդուգն բնավորութիւն, որպէս զի այդ տեսակ գործող կարողանայ դիմանալ կենսայի ամեն տեսակ արգելքներին, մարդկանց ամեն տեսակ կեղտոտութիւններին և իր հասարակական գործունէութեան կէս ճանապարհի վրա չը կանգնի, չիշնի իր ասպարիզից, դեռ կենդանի ժամանակ, մահից շատ տարիներ առաջ, մեռած չը համարվի այն ազգի մէջ, որի մէջ գործել է, որի հնացած գաղափարների դէմ երկար ժամանակ կռուել է:

Նեանքի ժամանակ ի՞նչն է ասպարիզիցը,— նշանակում է իր թուլութիւնը խոտովանել, նշանակում է իրան դատապարտել հասարակական մահվան, նշանակում է իրան յաղթված խոտովանել....

Իսկապէս Ստեփաննոս Նաղարեանց վաթճանկել է հայութեան համար ոչ թէ 1879 թւին, այլ արդէն 1864 թւին....

Թող հայոց հասարակութիւնը ինքն իրան մեղադրի, որ իր ձեռքերով սպանում է իր սեփական գործողներին, իր անտարբերութեամբ և թշնամութեամբ իր գործողները ամենալաւերին, դեռ նրանց կենդանութեան ժամանակ, դատապարտում է հասարակական մահվան:

Գ. Ա.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 ապրիլի

Թոյլ տուեցէք ինձ, պ. խմբագիր, ձեր լրագրի միջոցով հաղորդել հասարակութեանը մի շատ հետաքրքիր տեղեկութիւն:

Գեռ անցեալ տարվայ գեկտեմբերի 14-ին, Թիֆլիսից 30 վերստ հեռու, Հիւլիանի կայարանի դիմաց, Մետանի գիւղից չը հասած (թէ և այդ տեղը ինձ լաւ յայտնի է), գիւղացիները աշխատելով ճանապարհի շինութեան վրա, յանկարծ պատահեցին մի արգելքի իրանց աշխատութիւնների մէջ, գտնելով Տոգի մէջ մի նիւթ, որ իր արտաքին տեսքով նման էր սպիտակագուն—մոխրագուն քարի, իսկ իր բնավորութեամբ ունէր սապօնի բոլոր յատկութիւնները:

Միջոցառման ստացումը, եթէ այդպէս կարելի է անուանել, գտնվում է ահագին տարածութեան վրա, քարերի կոյտերի պէս, կառուածաւորով Տ. երկրի վրա, որ շատ ժամանակ չէ բերած էր քաղաք այդ քարի մի օրինակ նրան քիմիական հետազոտութեանը ենթարկելու համար:

Նա հաւատացնում է որ գիւղացիները գործ են ածում այդ նիւթը սապօնի տեղ իսկ ես իմ սեփական փորձով համոզվեցայ, որ եթէ այդ քարով ձեռները լուանան, նա աւելի փափկացնում է կաշին, քան թէ գլխից էր ինքն և տրիգաս սափած սապօնները:

Արդէս զի այդ տեսակ լուրը չընդունվի լաւ, դրական բաղի տեղ ես ահա ուղարկում եմ «Մշակի» խմբագրութեանը գտնված նիւթի մի կտոր, որ ցաւում եմ եթէ շատ փոքր է, բայց աւելի մեծը ես չը կարողացայ այլ ևս ձեռք գցել: Միջոց կտորի օգնութեամբ կը կարողանաք վերատուգել իմ ասածները:

Նա կարծում եմ որ ամենից շատ պէտք է հետաքրքրվեն այդ նիւթի քիմիական ձիջը հետազոտութեամբ մի կողմից կառուածատէր պ. Տ., և միւս կողմից տիկին Տօլէ, Թիֆլիսի սապօնի գործարանի տէրը:

Արեմն թող նրանք շտապեցնելով այդ հետազոտութեան գործը, բաւականացնեն և մեր հետաքրքրութիւնը:

Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Քանի մի օր շարունակ, կէսօրից յետոյ սկսեց անձրև զալ Թիֆլիսում: Թէ և աննշան քանակութեամբ է զալիս անձրևը, բայց այդ նու ամենայնիւ օդը բաւական հովացաւ:

Մեզ գրում են, որ գրեթէ ամբողջ Նիսապօլի նահանգի դաշտերը ոչնչացրեց մոռիկը:

Լուսմ ենք որ Ամբրոսիոս վ. Ռուբիկոսն ան, որ բաւական ժամանակ քարոզներ էր կարդում Թիֆլիսի եկեղեցիներում և բաւական փողեր հաւաքեց, ուղևորվում է այժմ դէպի Վարաբադ:

«Արարատեան» ընկերութեան համար նուիրատու անձանց ցուցակները շատ անգամ այնքան անորոշ են գրվում որ անհնարին է ազգանունները կարդալ: Սյր պատճառով թող չը վիրավորվեն եթէ այդ տեսակ անունները անորոշ էլ ապկում են մեր լրագրում: Թող պարզ և որոշ գրեն ազգանունները և այն ժամանակ պարզ և որոշ էլ կը սպվեն:

Թիֆլիսի տուրք Մարիամեան օրիորդաց Հաւաքարի դպրոցի վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը: «Հաւաքարի տուրք Մարիամեան դպրոցի վարչութիւնը ստանալով իր գանձապահ Յովհաննէս Տէր-Մարտիրոսեանի ձեռքով պ. Միրզոյեանցից 379 րուբլ զուտ գումար ապրիլի 19-ին տեղի ունեցած յօգուտ դպրոցի թատրոնական ներկայացումից, յայտնում է իր հրապարակական շնորհակալութիւնը պարոններին և օրիորդներին, այն համակրական գրացմունքի համար, որ ցոյց տուին նրանք իրանց գործակցութեամբ դէպի Հաւաքարի Մարիամեան դպրոցի ուսումնաձարաւ սանուհիները»: Սյր յայտարարութեան տակ ստորագրվել են վեց անձներ:

Շնորհակալութեամբ ստացանք ԵՐԵՒԱՆԻՑ, պ. Էմին Տէր-Գրիգորեանցի հեղինակած «Էլ չարէս ինչ, կամ երկու սիրահար» կատակերգութիւնը, մի արարունւծով: Տպված է Երևանում, Ջաջարիա Գէորգեան և ընկ. տը պարանում, 1879 թւին:

Ստացանք «Պոլկատեան փոխարքայութեան վրաց ազգաբնակչութեան մէջ դադարիտութեան տարածման Թիֆլիսի ընկերութեան» կանոնադրութիւնը: Կանոնադրութիւնը տպված է ռուսերէն և վրացերէն լեզուով և հաստատված է տեղական բարձր իշխանութեանից: Ստորագրողները ամենանշանաւոր վրացիներ են, թէ և նրանց թուում կան և հայեր:

Մեզ գրում են ՄԵՏ-ՎԱՐԱՔԻԼԻՍՏՅԱՆ, ապրիլի 23-ից: «Ահա մի ամենից աւելի է, որ անձրև չէ զալիս: Ժողովուրդը վերին աստիճանի յուսահատված դիմում է աղօթքներին և զոհաբերութիւններին: Անցեալ կիրակի խուռն բազմութեան ցանկութեամբ մատաղ արեւից: Ստուած վերջապէս լսելով մեր աղօթքը, ահա այս երեկոյեան ժամը 4-ին տուեց մեզ առատ կարկուտ անձրևախառն: Սորանով էլ զոհ է ժողովուրդը»:

ՄԵՏ-ՎԱՐԱՔԻԼԻՍՏՅԱՆ մեզ գրում են որ այդտեղ առևտուրը շատ է ընկել և ամեն ուսուկից թանկացել է: Մի ոչխար արժէ 10—13 րուբլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԲԱՆՍԻԱ

Ֆրանսիական քաղաքականութեամբ հետաքրքրվող ամեն մի անձն շատ պարզ կարող է նկատել, որ վերջին ժամանակներս գլխաւոր խորհրդարանների դաշարելուց յետոյ, այլ ևս մի առանձին աչքի ընկնող հետաքրքրելի շարժում չը կայ: Ըրադիրներին միակ զբաղեցնող հարցը, դա Բլանկիի ընտրութեան հարցն էր. դրա մասին եղած վիճաբանութիւններն էլ, թէ և սաստիկ, բայց և այնպէս շատ կարճատե էին:

Արեմն այժմ յուսուկի է, որ գլխաւոր խորհրդարանի դաշարման բոլոր ժամանակաւիջները կատարեալ խաղաղութեամբ կանցնի, բայց գլխաւորն այն է, որ այդ խաղաղութիւնը ցանկացած խաղաղութիւն կը լինի, առհասարակ ոչ մի կուսակցութեան պառաջուկ էլ ճառ չէ կարգում: Էլ չեն նկատվում այն վիճաբանութիւնները, այն եռանդուն ճառախօսութիւնները, որոնք սովորաբար տեղի էին ունենում ամեն անգամ, երբ գլխաւոր ժողովները դադարում էին. բայց այժմ ժամանակը փոխվել է. մրկային փոխարինելից յետոյ հասաւ գերեցիկ եղանակը. այժմ բնութիւնը խաղաղ ու անդորր է. հաշտութեան ծիածանը ամենալուսավորուն զոյներով կամար է կապել Ֆրանսիայի վրա. երկինքը բոլորովին պարզվել ու մաքրվել է. բայց այնու ամենայնիւ մի քանի անհաշտ լրագիրներ դարձեալ չեն դադարում հօրիզոնի վրա սև-սև ամպեր նկատել. բայց յոյս ունենք, որ այդ ամպերը նրանց երեւակայութեան մէջ միայն զոյնութիւն ունեն: Բայց և այնպէս նոյն իսկ հանրապետութեան մշնջ ջնհակնութեան համար անհրաժեշտ է միշտ այդպիսի ամպերից զզուանալ. դրանք թէ և ներկայումս իսկապէս չը կան, բայց ո՞վ կարող է երաշխաւոր լինել, որ մի օր և է անաջող դէպք, մի յանկարծական քամի չը ծածկէ ամբողջ երկինքը սև սպառնալի ամպերով....

Նւ այսպէս հանրապետականներն այլ ևս իրանց ստիպված չեն համարում բոլոր իրանց ճիգը թափելու հանրապետութեանը պաշտպանելու, նրանք ուրախ ու հանգիստ են, որովհետև հանրապետութիւնը հաստատ հիմք բունց Ֆրանսիայի հողի վրա, որովհետև այժմ էլ նրա փոյթը չեն Բլանկիի և Բրոսսէի միմիտրութեան ժամանակակից այն վճարները, որոնք նրան մահ էին սպառնում:

Անշուշտ չէ կարելի ասել, որ հանրապետութիւնը ազատվեցաւ իր դարաւոր ոսոխներից, առանց որոց նրա փառքը երբէք այդքան փայլուն չէր լինի, բայց մի բան կարելի է հաստատապէս ասել, այն է, որ նրա ամենաներդուկալ թշնամիներն անգամ խոտոտվանում և զոգում են, որ նա ապրում է, և որ եթէ նա անմահ է, զոնէ նա երկարատե է, նրանց այս կարծիքն էլ շատ միմիտարական է, որովհետև զոնէ այսպիսի համոզ

մունքից յետոյ կարելի է հաստատ յոյս կապել, որ այսուհետև երկրի յաջողութիւն ցանկացող անկեղծ բարեկամներ, մէկ կողմ թողնելով անօգուտ վիճաբանութիւններ կը սկսեն գործի ձեռնամուխ լինել:

ԱՆԿԻՍԱ

Հետզհետէ անգլիական քաղաքականութիւնը խառն ու փնթոր դրութիւն է ստանում: Նրա գործերը խճճված են Աֆգանիստանում, Բիրմանիայում, Նիպպոտում:

Կարծես այս բոլորը դեռ բաւական չը լինէին, նորերումս էլ հարաւային Ամերիկայում անգլիական զաղթականութիւնները ենթարկվեցան իրանց մի հարեան պետութեան վրէժխնդրութեանը. ճշմարիտ է, այդ ֆիասները համեմատելով արեւելքի կորստաբեր ու արկւնահեղ պատերազմներին, շատ ոչինչ են, բայց և այնպէս, կասկած չը տալու համար թէ առեւծը ծերացել է, այնտեղ էլ է հարկաւոր ոյժ պարապեցնել:

Վերջին ժամանակներս Անգլիայում բազմաթիւ միտինգներ են կազմվում, որոնց մէջ շատ նշանաւոր անձինք անբաւականութիւն են յայտնում կառավարութեան բռնած քաղաքականութեան դէմ. օրից օր լօրդ Բիկոնսֆիլդի թշնամիների թիւը աւելանում է. դժգոհութիւնը հետզհետէ ընդհանուր է դառնում Անգլիայի մէջ:

Այս օրերս պ. Գլադստոն մի ժողովում ասաց, որ քաղաքական ներկայ հանգամանքները սաստիկ վտանգի տակ են: Այժմ ամենքը պարզ տեսնում են, որ ազատամիտների աղիքնութիւնը թուլանալուց ի վեր, մեծամեծ փոփոխութիւններ են կատարվել թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ:

Հինգ տարի սրանից առաջ ոչ մի տեղ անբաւականութիւն չէր նկատվում: Գործերը շատ ջնդորութեամբ էին առաջ գնում, արտաքին քաղաքականութեանը ոչինչ վտանգ չէր սպառնում, և պատերազմի մասին ոչինչ չէր լսվում: Լօրդ Բէրբի Լանկաշիր նահանգի պաշտպանողականների ժողովի նախագահութեանից բոլորովին հրաժարվեցաւ: Նա մի առանձին նամակով յայտնեց որ իր հրաժարման միակ պատճառը կառավարութեան բռնած անկարգ քաղաքականութիւնն է. նա բացաշխարաս ասում է, որ քանի կառավարութիւնը չի փոխի իր վարմունքը արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ, նրան անկարելի կը լինի, որ և է գործի մէջ օգտակար լինել յետոյ իր նամակի վերջը նա աւելցնում է որ Լանկաշիրի ժողովում նա չէր կարող պաշտպանել այն քաղաքականութիւնը, որի դէմ նա յարձակվում էր լօրդերի ժողովում, ուրեմն այսուհետև նա իրան անկախ է հրապարակում:

Լօրդերի անցեալ ժողովում արտաքին գործերի միմիտրը յայտնեց, որ Աֆգանիստանի անգլիական զօրքերը հրաման չեն ստացել Կաբուլի վրա գնալու:

Հեռագրական լուրերը յայտնում են, որ ապրիլի 2-ին կատարված պատերազմում 1,200 զուլաններ սպանվեցան: Բացի այդ կապիտան Վօոթ առանց որ և է կորուստի գրաւեց 2,200 տաւար, 240 ձի և 3,000 ոչխարներ: Բազում օստի բնակիչները կատաղած են այդ կորուստի մասին: Կապից հաղորդում են լրագիրներին, որ ապրիլի 3-ին առաւօտը 11,000 զուլաններ յարձակվեցան Նէնգուլօօֆի մէջ գտնված Նէլմօֆօրդ լօրդի բանակի վրա, բայց մեծամեծ կորուստներով նրանք յետ մղվեցան: Լօրդ Նէլմօֆօրդ ապրիլի 4-ին գիշերը ռմբակոծեց Եկօֆէ քաղաքը: Անգլիացիք բոլոր թէ մեռածներով և թէ վիրաւորվածներով կորցրին միայն 290 մարդ, իսկ զուլանները կորցրին 2,500 մարդ: Եկօֆէ անցաւ անգլիացիների ձեռքը: Պահպան գորքերը Տուջենա գետով գնում են Եկօֆէ քաղաքը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յոյները և էպիրացիք սաստիկ եռանդով աշխատում են, որ Եպիրիան միացնեն Յունաստանի հետ. այս վերջին օրերս Եպիրիայում մի պատգամաւորութիւն պատրաստվեցաւ, որը ուղեւորվելով դէպի Իտալիա, նրա արտաքին գործերի միւստրութեան քարտուղար պ. Տօրնիէլլին մի յիշատակագիր ներկայացրեց, որի մէջ պատգամաւորութիւնը աշխատում է ապացուցանել, որ Եպիրիան պատմաբանապէս Յունաստանի մասն է կազմում. նրանք յիշեցնում են, որ Յունաստանի անկախութեան համար կուտող զօրքերի շարքում արեւն էին թափում նոյնպէս և Եպիրիայի քաջ որդիքը. ուրեմն արդարութիւն չէր լինի, որ հաւասար դժուարութիւններին մասնակցող ժողովուրդը զոհվէր հաւասար իրաւունքների արտօնութեանը: Բացի այս նըրանք յիշեցնում են, որ առանց Եպիրիայի Յունաստանը գտնվում է առանց պաշտպանութեան դժի, և որ Յունաստանի անկախութիւնը պաշտպանող ամենալաւ սահմանադրութեան մէջ է Եպիրիան է:

Այսուհետեւ յարգելի պատգամաւորութիւնը յիշեցնում է, որ Եպիրիացիք քանիցս անգամ է, որ այլ ևս չեն տանելով թիւրքաց բռնակալութիւնները կամեցել են ապստամբվել թիւրքաց կառավարութեան դէմ, բայց Յունաստանը իր խաղաղասէր ոգով նրանց միշտ բարեկամական խորհուրդ է տուել յետ կենալ այդ յանդուգն դիմաւորութեանը, միշտ յուսալով և յոյս տալով, որ Եպիրիան արդարապատութիւնը չի զլանայ ուշադրութիւն դարձնել այս ծանրակշիւ իրողութեան վրա: Յունաստանը այնպէս համոզված է իր արեւնակից և հայրենակից եղբայրների ջերմ համակրութեան մասին, որ եթէ Եպիրիան այդ արդարապատութիւնը ուշացնէ իր բարերար օժանդակութիւնը, այն ժամանակ նա ստիպված կը լինի իր սեփական նեղ միջոցներով պաշտպան հանդիմանալ իր հայրենակիցների իրաւունքներին: Աերջին յիշատակագրի գործութեամբ Յանինա քաղաքը ձանաչված է իբրեւ բողոքով յունական քաղաք:

Եպիրիան կարենաները հակված են դէպի այն միտքը, որ անկախութիւններից և պատերազմներից խուսափելու համար պէտք է բաւականութիւն տալ դժգոհներին...

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՆ

Մ ան, 9 ապրիլի

Հայ պատգամաւորութեան ըրած խնդրոյն խերքին վեհաժողովին չընդունուիլն ոչ միայն զրկեց Հայաստան ազազայ բարօրութենէ մը, այլ պատճառ եղաւ որ Հայաստան աւելի ծանր թշուառութեանց մասնունեցաւ. վասն զի այն ժամանակէն ի վեր թիւրք կառավարութիւնը բոլորովին թշնամացած է մեր ազգին և մասնաւոր ջանքով փռացնել կաշնատի: Այս օրոյս լրագիրներն կը գրեն արդէն ինչ հարստահարութիւններ որ ամեն գաւառներ կը պատահեն նոյն իսկ տեղական կառավարութեանց աչքին առաջ և բուն իսկ նոցա թոյլտուութեամբ: Սըխալ չէ ասել թէ ամեն գաւառներէն աւելի Ս. անայ մէջ կաշնատի կառավարութիւնը ոչնչացնել հայոց մեծամասնութիւնը, և այս նպատակին համար ոչ մի ջանք չը ինչայն: Իւրեւրդեաւ և մասնաւոր թիւրքերու գործած չարիքներն շատ անշնան են այն խորամանկութեամբ գործուած չարեաց առաջ զորս կառավարութիւնն կընէ անզգար: Ինչպէս որ ձեր Ա. Օրոյս թղթակից պ. Հայկակ դիտեր էր իւր նամակներէն միոյն մէջ, կառավարութիւնը շատ անգամ կը ջանայ հայ ժողովուրդը երկպառակել, գրգռել միմեանց դէմ, առաջնորդարանի դէմ, և այլն, որպէս զի ժամանակ չունենայ մտածել իւր յառաջդիմութեան միջոցներուն վրա: Շէշտ այս դրութեամբ կը վարուին նաև տեղոյս կառավարութիւնը. զի կուսակալն մի օր ուղեց որ շուրջ

հակալութեան հանրագիր մը շինուի հայոց կողմէն և ի. Վուս երկուի, որ ծառայէ յայտնել թէ Ս. անայ ժողովուրդը շատ գոհ է կուսակալէն: Այդ հանրագիրն ընկալաւ արդէն կընար ժողովուրդէն համակրութեան գտնել. քանի որ կուսակալն վերջին աստիճան առնել է ժողովուրդէն չարանքէ կտրամանկութեան համար, ուստի նա ջանաց միայն առաջնորդ արեւանի և կառավարութեան դուռ գտնուած հայ պաշտօնէից ստորագրութիւններն առնելով բաւականաւ: Այդ վերջիններն առ երկուի (!) ստորագրեցին: Բայց իւրեւրդ արեւանը յանձն չառաւ ստորագրել, թէ և կուսակալն շատ աշխատեցաւ: Եթէ արեւանը ստորագրէր այն ծրագիրն ուղղակի սուտ հանած կը լինէր բոլոր այն հարստահարութեանց տեղեկագիրն զորս յըրած է Ա. Օրոյս պատրիարքարան: Երեւի արեւանի ստորագրութիւնն զնել չընդունելուն վրա հայ պաշտօնէիցը նկատելով թէ իրենք շատ արհամարհելի եղան ժողովուրդէն առաջ, թշնամացան արեւանին հետ, ժողովուրդն ալ իրենց դէմ զայրոյթ դրաց, և այսպիսով քիչ մնաց որ մեծ երկպառակութիւն մը տիրէր երկու կողման մէջ: Բայց բարեադրաբար ժողովուրդը գիտնալով երկպառակութեան փաստակարարութիւնը, չը ծառայեց կառավարութեան ներքին դիտում առաջացնելու, այլ շուտով հանդարտեցաւ: Կառավարութիւնը ամենին կարեւորութիւն չը տար այլ ևս առաջնորդարանի և զայն հայ ժողովուրդէն ներկայացուցիչ ալ չը ձանձար. այլ ամեն բան մի քանի հայ պաշտօնէից ձեռք կը գործէ, որպէս թէ նոցա լինելի առաջնորդարանի վարչութիւնը կազմող կամ ժողովուրդը ներկայացնող: Կառավարութեան ներկայ դիտում շատ փաստերի պիտի լինի հայոց համար և ամենին կարելի չէ նոցա առաջն առնուլ. քանի որ թիւրքերը գործոց արտաքուստ միջամտութիւն չը կայ: Իսրեկարգութեան հաստատելու համար հազարաւոր յանձնաժողովներ եթէ գան Հայաստան, դարձեալ օգուտ չունին, քանի որ կառավարութեան կը երկուի: Երբեք յուսալու չէ թէ պիտի բարւոյն Հայաստանի վիճակը, քանի որ թիւրքերը անկախ կամքին ձգուած է: Հայաստանի բերաւորութիւնը անձեքներն կ'ընեն կը բարդուին: Երբեք վրա որ յունիս 4-ի դաշնադրութեամբ պատասխանատու արեր է ինքզինքը Փորթ-Լիոյ քրիստոնէից վիճակին և մինչև ցարդ ոչինչ ջանք ըրած չէ այն դժբաղդ վիճակն լաւացնել: Բայց ինչ կարծէք թէ շատ դժուար է հայերն աղաւ պահել հարստահարութիւններէ, — ամենին դժուար չէ, բաւական է որ կառավարութիւնը կամք ունենայ, այլ մեք հաստատ և փորձով գիտեմք թէ նա չը պիտի ուղէ հայեր երջանիկ տեսնել. և այսպէս պիտի ջնջուին հետզհետէ հայերն Հայաստանէն, քանի որ թիւրքերը կամքին ձգուած են, որ տեսնեն թէ ինչ տեսակ բաներ կան: Այն թղթագրամն որ ինքն տպած է և որուն փոխարէն ոսկի տալ պարտաւոր էր կառավարութիւնը, այս միջոցին յանկարծ շրջադրութեանէ դադարեցուց, վասն զի ինքն ո' և ինչ տուրքի փոխարէն, այլ մեծադեպ դրամ կը պահանջէ: Իսկ թղթագրամն կը մնայ անոնց քով, որք զայն ունէին կանխաւ: Այս բոլորովին գին կորսնցնելու վրա է թղթագրամն, զի 100 զրուշ թղթագրամն կարծէ իւր 14—15 զրուշ մեծալիք կամ 12—13 զրուշ ոսկի դրամ: Թղթագրամն այս տեսակ շրջադրութեանէ դադարեցուցնել սարսափելի հարուած եղաւ ժողովուրդէն համար. բայց աստի, մի և նոյն ժամանակ կը պահանջէ կառավարութիւնը որ մարդագլուխ քառորդ օսմ. ոսկի վճարուի գանձուէ, զոր կը գործածեն, կասէ, թղթագրամն գնելու և այրելու: Այս արտաքոյ կարգի ծանր տուրքն կը պահանջուի ամեն արուշն սկսեալ 1 ամսեայ տուրքէն մինչև գերեզմանի դուռ հասնող ծերունին. տակաւին յայտնի չէ թէ ուրիշ գաւառաց մէջ ալ այսպիսի տուրք կ'ուղղուի, բայց այս յայտնի է թէ Ս. անայ ժողովուրդը չէ կարող վճարել, վասն զի քառորդ օսմ. լիւրս այժմ 50 զրուշ պղինձի հաւասար է և ինչպէս կ'ընայ գիւղացի մը վճարել որ ունի 10—12 արու իւր տան մէջ, ասել է թէ 500—600 զրուշ պիտի վճարէ. սա այնպիսի մի դուռար է ոյր համար գիւղացիք շատ անգամ պանդխտել կը ստիպին և 5-6 տա-

րի հազիւ կը յաջողին հայթայթել: Երբեք այս դարուն խիստ շատ մարդիկ պանդխտութեան պիտի գնային այս արտաքոյ կարգի ծանր տուրքն ալ բոլորովին պիտի ստիպէ հայեր որ ձգեն իրենց ընտանիք և փախչին: Այդ ժամանակ կը հասնի կառավարութիւնը իւր բաղձանքին, վասն զի որ հայ տուն որ պանդխտու ունեցած է, գրեթէ փռացած է: Հայաստանի քանդու մի թիւրք կառավարութեան է և ոչ թէ քիւրդերէն:

Եւստիյ Թուսիոյ ամենողորմած Կայսրն որ իրապէս քրիստոնէից ազատութեան պաշտպան կանգնելով այնպիսի մեծահաջ փառք վաստակեցաւ, ում չը հաւասարի կողմէն Պուլիսի Նիւսադէմն ազատու փառքն և զոր չը կըրցան ձեռք բերել ոչ Յիւդերիկ Պարպարոսա, ոչ (Գիւստ-Ֆիլիպ, ոչ Էդիպարդոս առիւծասիրտն ոչ Սէն Լուի և այլն պուլլարներն ազատու համար իւր որդեց արեւն թափել տուաւ, իսկ հայոց համար որ նոյնպէս քրիստոնէայ ենք և նորին ամենողորմած Ա. Եհափառութեան ջերմ համակիր արեւն թափել հարկ չէ և զայդ չենք խնդրեր, այլ կը խնդրենք խնարհաբար որ բարհաճութիւն ունենայ Հայաստանի կուսակալութեանց կեդրոններ մէջ մէկ ուսական հիւպատոս դնել, որով հայերն ազատած կը լինի իրենց ներկայ թշուառութենէն, վասն զի քաջ համոզուած ենք որ միայն մէկ ուսական հիւպատոսի ներկայութիւնն բաւական է արգելելու համար թիւրք կառավարութիւնն որ Հայոց չարիք չընէ կամ հայոց դէմ գործուած չարիք չը քաջարեւ. միայն ուսական հիւպատոս կրնայ այդ բան անել: Եւստիյան հիւպատոս մը, մեղ կը թուի թէ, թիւրքն չը պիտի տարերին: Հայաստանի հայն համակիր է ուսական մեծ ազգին, որոյ դիւցազն որդիք այժմ այնչափ սարսափ պատճառած են թիւրքաց, որ թիւրքն իւրեանց երեսներն վախեցնելու համար Սոսիոյի անուն կը յիշեն, ինչպէս երբեմն խաղաղիք Եւստիյան անուն կը յիշեն և սարակիստները Ռիշարի: Քաջապէս վստահ եմք, թէ ամենաողորմած Եւթարդ Ռիշարի կայսերական կառավարութիւնը չը զլանար այս շնորհ անել Հայաստանի հայոց, որոց առաջ մեծ կը թուի այդ շնորհ և որ դիւրին է իրեն համար. նաև աւելորդ չենք համարի խնդրել Ռուսաստանի մեր հայ եղբայրներէն որ ուսական կայսերական կառավարութեան ուշադրութիւնը միշտ հրաւիրեն այս կէտին վրայ: Եւստիյան վիճակին վրա կարեւոր բան մը չը կայ որ գրեմ: Միայն թէ երկուստեք թիւրք հետզհետէ կ'ոգեւորի և ընկերութիւններ կազմելով ժողովուրդէն օգնել կը ջանայ և ուսում և կը թուի թէ տարածելու կ'աշխատի: Եւստիյան արեւանի շուտով որոշուած էր, բայց պատերազմին պատճառաւ մինչև ցարդ ուշացած էր: Եւստիյան ընկերութիւնը ունի այժմ Ս. անայ մէջ երեք նախակրթարան և մէկ վարժապետանոց: Թող տեսնեն ամեն կարգի ազգայիններն և ըստ այնմ շարունակեն իրենց համակրութիւնը նորա վրա:

Միւստ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բոլորայի և Բուսիլիայի թիւրքերը շուտով մի պատգամաւորութիւն կուղարկեն օտար պետութիւնների մօտ, որպէս զի խնդրեն, որ միջոց արվի այն հայաժանիներին, որ կրում են նրանք բոլորայիները

Ապրիլի 23-ին աւստրիացոց կայսրը, ընդունելով բոսնիացոց պատգամաւորութիւնը, ասաց, որ նա մեծ յոյս ունի Բոսնիային մի

մշտնջենական և երջանիկ ապագայ շնորհել. և այդ նպատակին հասնելու համար, նորին մեծութիւնը յոյս ունի, որ տեղական ժողովուրդը նրան կատարեալ օգնութիւն կը տայ:

Այս օրերս Մադրիդի կարենաւ մի ծրագիր ներկայացրեց այդ քաղաքում գտնված իրանական դեսպանին, որի հիման վրա սպանիական և իրանական կառավարութիւնները կաշնատեն այդ երկու պետութիւնների միմեանց մէջ ունեցած յարաբերութիւնները դիւրացնելու համար, Պրեմիեր սարերի վրայով մի երկաթուղու դիմացկացնել: Ասում են որ այդ դիմաւորութիւնները արդէն սկսվել են:

ԻՍԼԱՄ ԼՈՒՐԵՐ

Վաղը կիրակի, Թիֆլիսի Սօբորնայում լինելու է դօկտոր Շիշմանեանի հայերէն դասախոսութիւնը «Երկրիայի մասին»: Արդիւ 8 ժամին երեկոյան: Տոմարները ծախվում են 2. Գրիգորեանցի «Ուղիական Գրականութեան» և նոյնպէս «Ներսիսեան Գրականութեան» մէջ (Սրբութեան զայեղում):

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱՎՈՐՆԵՐ

ՄՍՍԻՎԱ, ապրիլի 26-ին: Այսօր, առաւօտեան 3 ժամին վաղեմանցաւ մեր յայտնի պուլլիցիստ, «Հիւսիսային» խմբագիր և պրոֆէսոր, դօկտոր Ստեփաննոս Նաղարեանց: Սոսկիցի հայոց հասարակութիւնը խոր ցաւ և ակցութեան զգացմունքի մէջ է:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 27 ապրիլի: «Правдѣ Вѣстѣ» հաղորդում է, որ Աստրախանում յայտնված տիֆլիսի թղթագրից, հիւսան դացաճները միւր մեռաւ, իսկ մնացածները առողջանում են: Սպանիայի Երիտիւսա Մանիսայի մահվան պատճառով Ս. Պետերբուրգի պալատում վեց օրվայ սուգ է նշանակված: Փաղաւոր կայսրը նուիրեց 30,000 ռուբլ յօղուտ Օրէնբուրգ քաղաքի հրդեհից փնասվածներին:

ԿՐՈՆՏԱՎ, 27 ապրիլի: Այսօր ապստում են ուսաց երեք կրէյտները զալուն, որոնք կառուցված են Ամերիկայում և որոնք դուրս են եկել Կոպէն հագնեցի 24-ին ապրիլի: Տիֆլիսի Թղթագրի, 25 ապրիլի (7 մայիսի): Նրէկ Կ. Պուլից Երրուշիվ հասաւ այսօր: Այսօր բոլորական մայր եկեղեցում կատարված հանդիսաւոր մաղթանքներից յետոյ, Երրուշիվ ձառ կարդաց, որի մէջ նա յիշեց, որ Սուլթանը կայսրի սեփական ձեռքով դրած նամակը ընդունելուց յետոյ, խոստացաւ, որ երբեք թիւրքաց զօրք չի ուղարկի արեւելեան Ռուսիլի: Այդ յայտարարութիւնը ուրախութեամբ ընդունվեցաւ բոլորներից: Սրանից յետոյ Երրուշիվ կարդաց կայսրի պրօկլամացիան, որ ուղղած էր բոլորներին և արեւելեան Ռուսիլիային, որը ընդունվեցաւ բարձրաձայն կեցցէներով: Այստեղ տիրում է կատարեալ հանգստութիւն: Բոլորները կատարեալ և միասիրտ հպատակում են թագաւոր կայսրի իմաստուն խորհուրդներին:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳ, 27 ապրիլի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 97 ռ., երկրորդ 96 ռ., երրորդ 96 ռ., չորրորդ 96 ռ., ներքին 5% տոմսին փոխառութեան տոմսեր արժէ 242 ռ. 25 կ., երկրորդ 236 ռ. 25 կ., արեւելեան տոմսին փոխառութեան տոմսեր 93 ռ. 75 կ., երկրորդ 93 7/8 ռ., ոսկի 8 ռ. 52 կ.: Թիֆլիսի կառուածական բանկի գրաւական թիւրքը 94 ռ. 50 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23 պենս: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թվին

ԿՐ ՀՐԵՏԵՐԵԿՎԻ ԼՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոների հետևել օրերից:

Լրագրի գերբը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԵՅՆ ԽՍՐԵՐԵՏԵՐԵՆ մեջ:

ԼՄԵՆԶԻՆ ՀԵՐԵՐԵՆԵՐԸ ծախվում են 5 կոպեկով հատար: Օտար քաղաքներից պետք է գրվել հետևել հասցեով ТИФ-ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА ОБЪЯВЛЕНИЕ

Съ 9 Апрелья будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поѣздъ № 5				Поѣздъ № 6			
Станціи.	Приходъ		Отходъ	Станціи	Приходъ		Отходъ
	Ч.	М.			Ч.	М.	
Поти	—	—	6 45	Тифлисъ	—	—	12 56
Ріонъ	1	25	2 20	Гори	4	15	4 35
Квирилі	3	46	4 39	Михайлово	6	25	6 45
Михайлово	9	36	10 06	Квирилі	11	44	12 15
Гори	11	55	12 20	Ріонъ	1	24	1 54
Тифлисъ	3	51	—	Поти	6	35	—

Пассажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

ԼՄՈՅՅԱ 8-ին Տիֆլիսեցի գեղամեծր պ. Նիկողայոս Տեր-Յակոբեանց աշխարհածանօթ անձը, իւր զործոյ զբաղմունքներէն ստիպուած պատահելով Շարուր գաւառի Խանդավազ գիւղում որը 84 տուն հայազգի բնակիչներէ կը բաղկանայ, և ունի մի եկեղեցի սուրբ Սարգիս անուամբ կառուցեալ և մի ծխական դպրոց եկեղեցոյ բակում, որի մէջ այժմ կան 50-ի չափ ուսանողներ և մի ուսուցիչ, որ դաս է խօսում հայերէն, ռուսերէն և պարսկերէն, ստանալով իւր վարձը իւրաքանչիւր ուսանողներէ:

Իսկ այս անգամ վերոգրեալ ազգասէր իշխանը, տեսնելով զրպրոցի բաւականի չափ դաստիարակութիւնը, և գիւղացոց ջերմեւանդութիւնը դէպի ուսում, մէկէն իւր ազգասիրական եռանդը շարժելով մի ժապաւինեալ տումար կազմեց դպրոցիս զբամազուի ունենալու համար, ու ինքը նախաբար ստորագրեցաւ, փճարելով կանխիկ 240 ռուբլ ու խոստացաւ կրկին շատացնելու գումարը այլ և այլ ազգասէր անհատներէ, որոյ բնիկ ազգասէր իշխանութեանը մեր խորին շնորհակալութիւնը կը մատուցանեմք:

Մահտեսի Ռուբէն Աճիմեանց:

3—3

ԼՄԱՅԵԼԱՅԻ պ. Բաղդասար ՄԻԻԹԱՐԵԱՆՅԻ ՏՈՒՆՆ Ձ 3 որ գտնվում է ԼՄԱՅԵԼԱՅԻ (ԼԵՏՈՒՄԻ) և բժիշկ պ. Դեղալուզի տան մէջ տեղը ԿԵ ՏՐՈՒԻ ՎԱՐՁՈՎ, ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐՈՒ ԲԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ուստի ով որ կամենում է զայն վարձել կարող է յայտնել իւր ցանկութիւնը ԼՄԱՅԵԼԱՅԻ պ. Գեորգ Սաղաթէլեանցին: Յիշեալ տան ներքին ՆԱՅԱՐԿԸ ունի չորս ճանապարհ, իսկ ՎԵՐՆԱՅԱՐԿԸ երկու թէ ներքնայարկը և թէ վերնայարկը ունեն հինգ հինգ սենեակներ, իւրաքանչիւր յարկի համար ՎԱՐՁԱԳԻՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ Է 300 ռուբլ:

2—3

ԿՈՒՆԻՈՒՄ, Մոստովայա փողոցի վրա, վարանցով արձանի մօտ, վարդմէր Լաւրենտի Սիւնկոյի շէնութեան մէջ (որ էր Մարկոզեանի), իմ ֆիրմայով բաց արի ՆՈՐ ԳԻՆԵՎԱ ԼԱՆՈՒՆՈՅ, որտեղ ծախվում են ԵՆՈՒՆԿԱՆԻ ԲԱՆԿԵՆ ԵՒ ԲԱՆԿԱՆ ՏԵՍԵՆԻ ԳԻՆԵՎ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱՅԳԻՆԵՐԻ: Ե՛լը 25 կոպէկ և աւելի: Մենք յուսով եմ որ թիֆլիսի հասարակութիւնը առանց ուշադրութեան չի թողնի իմ գինիների թէ արժանաւորութիւնը ու թէ բնականութիւնը ու անխառնորդութիւնը:

Վարդան տէր—Պողոսեան:

PRIME A NOS LECTRICES

POUR DOUZE FRANCS AU LIEU DE QUINZE

on reçoit pendant un an la mode française

Ce journal, paraissant tous les Samedis, est le plus intéressant, le mieux fait et le plus complet de tous les journaux de modes.

C'est le seul qui donne des Patronnes découpées de grandeur naturelle.

DÉTACHER CE BULLETIN et l'adresser, avec un mandat-poste de 12 francs, à M. ORSONI, Administrateur de la Mode Française, 37 rue de Lille, à Paris.

ԱՊՐԵԼԻ 28

Յ Ե Վ Ե Կ Ա Ց Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՅՈՒՆՆՈՅ (Ապրիլի 27-ին)		Գ.	ՀԵՐԵՐԻՆ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ	ՓՈՍՏ	ԲԺՇԿԱՆՈՅ	«ՄՇԱԿ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
Ոսկին (պողոնայերիւր)	8 55	Կովկասի և Ան-		Թիֆլիսից մինչև Փոթի		Ամեն տեսակ թէ նա-	Հիւանդների բնականու-
2ին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	դրովկասի քա-		(ճանապարհորդների գնացքը) 9		թէ ծանր փոստ ամեն տեղ	թիւնը ծանր 9-ից մինչև 1
2ին 20 4. 72 պր. 1000	1740	ղաքները	1	ժամին 21 րոպէ առաւօտեան:		ուղարկելու, ընդունում	ծանր կէսօրից յետոյ:
Վիգորի 50/100 առաջի փո-	241	Ռուսաստան	2	Մինչև Միխայլովո (խառն		են ամեն օր, առաւօտեան	Երկուշաբթի. Լիսի-
խառնութեան տոմ. 100	238	Աստորիա	3	գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18		8 ժամից մինչև 1 և կէսօրից	ցեղ և Գորայի վիշնրբին
Երկրորդ 50/100 վիգորի 244	100	Անգլիա	4	րոպէ:		յետոյ 3 ժամից մինչև 7.	հիւանդութիւններ, Գուշա-
Մարտի կուրսը 244	100	Գերմանիա	2 88			իսկ կիրակի օրերը հասա-	րան կանանց հիւանդութիւն-
Լուսնի կուրսը 0 գեսայի	105 19	Ֆրանսիա	3 75			րակ նամակներ մինչև 10	ծանր առաւօտեան և 3—7
վրա:	100					ժամ երեկոյեան:	Երեքշաբթի. վերջին և
վենայի կուրսը ամէ 113 գր.	5 65					Ռուսաստանից և	ներքին հ. Միսկի վի-
Կարեւոր բարձր.	320					Պոստատարումէ թիֆ-	րաբուժական հ. Ա. Բա-
Առաւարական բանկի ալ-						լիսում ամեն օր. Բա-	խուսով կանանց, երեխա-
ցիան 200 մ.	102					գուշի արակաթից երեք-	ների հ. և մանկաբարձու-
Փոթի թիֆլիսեան երկա-	7 40					շաբթի և չաբաթ օրերը:	թեան. Բէյն ալից հ.:
թուղու աղցիան 125 մ.	7 30					Երեւանի արակաթից եր-	Չորեքշաբթի. Լիսի-
Շաբաթը բրոզիլու	5 60					կուշաթի, հինգշաբթի և	ցեղ ներքին հ.:
միւս տեսակը	5 80					շաբաթ. Փոթի-Թիֆ-	Հինգշաբթի. վերջին
արանդիւր	12 50					լիսում երկաթուղուց	չէլ ներքին հ. Գուշարեանց
մարք վճարած	7 60					ամեն օր. Նուստու արակ-	սիֆիլիսական և միզային
Բ. մ. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե.	7 50					ալից չորեքշաբթի և կի-	գործարանների:
մերկայի սերմից	4 20					րակի: Բիսկիլուցի Թը-	Ուրբաթ. Լիսիցեղ
Միւս տեսակը հին սերմից .	1 70					րակից երեքշաբթի և չա-	ներքին հ. Ա. Բախուսով
Բորդը թուղի	—					բաթ:	կանանց և երեխաների
Թարաքամի	12 60					հ. և մանկաբարձութեան:	համարում դեռ մնում
Ե. Լ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.	200					Դաքի արակաթից երեկո-	է: Մենք նորից ալից անցրինք
Ե. Լ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.	140					յետոյ 3 ժամից մինչև 7.	այդ գրուածը և գտնում ենք
Ե. Լ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.	40					ժամ երեկոյեան 9 ժ. 31 ր.	թէ նա փոքր ի շատէ փոփո-
Յրիզոնը (լաւը) Ազու-	55					56 ր.	խուլութիւնների է կարօտ:
լիւայ	27					Տեղի գրի թիֆլիսից	—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
Կ. Բ. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե.	22					Միսկի	ղուածը նիւթերի բազմու-
Լիւայ	18					Սոթի	թեան պատմաւոր դեռ մնում
Մարտի/իւն	—					Փոթի	է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
							—Թիֆլիս. Գ. Դ. Չոր Ե.
							ղուածը նիւթերի բազմու-
							թեան պատմաւոր դեռ մնում
							է: Մենք նորից ալից անցրինք
							այդ գրուածը և գտնում ենք
							թէ նա փոքր ի շատէ փոփո-
							խուլութիւնների է կարօտ:
						</	